

Ս. Մեսրոպ – Արապեան վարժարանի 45-րդ տարեդարձը

Սփիւռք, Ֆրանսա # Կրթութիւն 05/3/2024



Խմբագրական

Չարկ տալ տնտեսական գործակցութեան
28/03/2024

Տեսերիզ



Սեւան Անանեան ելոյթ կ'ունենայ ձախէն՝ քաղաքապետ Լիւթ Գարվոնաս, քաղաքապետական խորհրդական Սարո Մարտիրեան, երեսփոխանուհի Իզապէլ Սանթրակօ, վարժարանի ինստիտուցիոնալ մարմինի նախագահուհի Քրիսթինէ Գաբրիէլեան, տնօրէնուհի Նորա Թաշճեան եւ վարժարանի նախկին սաներէն Ֆիլիփ Արսլան

Շարքա, Մարտ 2-ին, Ս. Մեսրոպ – Արապեան վարժարանը տօնեց իր հիմնադրութեան 45-րդ տարեդարձը: Այս առթիւ վարժարանին Հայերէնի ուսման պատասխանատուն՝ Նորա Թաշճեան, ջանք չէր խնայած Ս. Մեսրոպ կրթարանի 45 տարուան պատմութիւնը լրագրերէն քաղելով՝ պատրաստելու համար ցուցահանդէս մը, որ պատմելով դպրոցին պատմութիւնը՝ կը պատմէ նաեւ գաղութի կառուցման պատմութիւնը: Նախքան դպրոցը՝ եկեղեցին: Նախքան եկեղեցին, հայ գաղթականութիւնը, հայ բանուորները, որոնք Փարիզի եւ ի մասնաւորի Ալֆորվիլի շրջանի գործատուներուն մէջ աշխատանք գտած են, տեղաւորուած, ընտանիք կազմած, հանգանակութիւն կատարած...:

Սեւան Անանեան, Ալֆորվիլի հայ համայնքի պատմութեան «միջազգային մասնագետը», ինչպէս ինք ինքզինք կը բնորոշէ կատակով, հանգամանօրէն ներկայացուց Ալֆորվիլի հայ գաղութի կազմութեան հոլովոյթը: Յովհաննէս Գոյունճեան, կեդրոնացաւ Ս. Մեսրոպ կրթարանի հիմնադրութեան ու զարգացման պատմութեան:

Դպրոց կառուցելը պայքար է: Բժ. Սերժ Սիմոնեան, եւ մի քանի «խենթ»-եր կը լծուին հայկական դպրոց կառուցելու աշխատանքին: Պետք էր առաջին հերթին համոզել հայ համայնքը, ջոջերը, կարգ մը եկեղեցականներ, անոր անհրաժեշտութեան մասին: Տարիներ ետք, մինչեւ այսօր, դեռ պայքարը կը շարունակուի, Նորվան Սրբազանի, ողբացեալ Կարպիս Տրքաշեանի, Գեորգ Արապեանի եւ անոնց համախոհներու շնորհիւ, որոնք APCAF-ի շուրջ համախմբուած, ջանք չխնայեցին որ կառուցուի դպրոցին նոր շէնքը եւ կրցան լուրս առ լուրս հաւաքելով իր աւարտին հասցնել եկող տարեշրջանին բացուելիք Մանկապարտեզն ալ:

Տարեդարձի յայտագիրը ճոխ էր: Երեկոյթը կը հովանաւորէր Ֆրանսայի թեմի առաջնորդ Գրիգոր վրդ. Խաչատրեան: Նախկին սաներէն Ֆիլիփ Արսլան եւ Սելին Պու Մըշրէք խօսք առին իբրեւ աշակերտ իրենց փորձառութիւնը պատմելու, երախտագիտութիւն յայտնելու: Տիկին Քրիսթինէ Գաբրիէլեան, դպրոցին ինստիտուցիոնալ մարմինի նախագահուհին շնորհակալութիւն յայտնեց Ալֆորվիլի քաղաքապետին, Մանկապարտեզի շինարարութիւնը իր աւարտին հասցնելու նպատակով անոր կատարած 250.000 եւրոյի առատածեռն նուիրատութեան համար:

Յուցահանդէսի պաշտօնական բացումին զուգահեռ ներկաները հիւրասիրուեցան թէ՛ համադամներով եւ թէ՛ երաժշտական նուագակցութեամբ, որու ընթացքին Սոնա Գրիգորեան (դաշնակ), Շուշաննա Վարդանեան (ջութակ) նուագեցին Բաբաջանեանի, Կոմիտասի եւ Արամ Խաչատրեանի յօրինումները: Իսկ Պօղոս Եղիազարեան մեկնաբանեց՝ Աւետիք Իսահակեանի բանաստեղծութեան վրայ յօրինուած «Օտար ամայի ճամբքի վրայ» երգը:

Թ.Շ.



Հայաստան



Թուրք Մանիսայը պաշտօնապէս բացուած է երկրորդը՝ Գերմանիոյ մէջ



Երեւան-Լին օդիւղներ

Սփիւռք



ՊԵՆՃԻԲԱ – Պրիւսի մէջ կատարուած է Հայ դասի Եւրոպայի յանձնախումբի նոր գրասենեակին բացումը



ԳԵՐՄԱՆԻԱ – «Հաւատքի ճամբար» երիտասարդական հանդիպումը

Տարածաշրջան



ՀԱՅԱՍՏԱՆ – Երեւանի Պետական համալսարանին մէջ կատարուած է Վրացագիտութեան կեդրոնին բացումը



ԹՈՅՎՕ ԲԼԱՎԻՐ. «Հայաստանի հասցին հնչող ազերպայճանական սպառնալիքները անընդունելի են»

Ազերպայճան



Ժ.-Բ. Պիւտինի ահագնազը ազերպայճանական սպառնալիքներուն մասին



ԺՇԼԵԻ – Հայաստանի եւ Ազերպայճանի խորհրդարաններու նախագահներուն հանդիպումը

Ֆրանսա



Երեւան-Լին օդիւղներ



Վարչապետը ընդունած է Ֆրանսա-Հայաստան միջխորհրդարանական բարեկամութեան խումբի նախագահ Անն-Լուան Փեթլի զվարտորած պատուիրակութիւնը

Միջազգային



Վարչապետ Փաշինեան ընդունած է ՕԹԱՆ-ի ընդհանուր թարտուարը



ԼԱ ՂԵՑ – Դոմինիկանադրութեան՝ Հայաստանի անդամակցութեան պաշտօնական արարողութիւնը